

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

*20.07.2007թ. նիստին*

### *Մասնակցում էին՝*

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

### *Հրավիրված էին՝*

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր տնտեսագետ Ա.Գյուլբենկյանը:

### *Նիստում լավեցին հետևյալ հարցերը.*

1. «Հայաստանի Հանրապետության համար Ստանդարտների և կոդերի պահպանման հաշվետվության (ROSC) և Տվյալների որակի գնահատման ձևաչափի (DQAF) կազմման շրջանակում, Հայաստան՝ ԱՄՀ առաքելության վերաբերյալ» հաղորդումը:

*/Ձեկուցող՝ Վ.Դանիելյան/*

### *Որոշեցին՝*

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության համար Ստանդարտների և կոդերի պահպանման հաշվետվության (ROSC) և Տվյալների որակի գնահատման ձևաչափի (DQAF) կազմման շրջանակում, Հայաստան՝ ԱՄՀ առաքելության վերաբերյալ» William E. Alexander-ին ուղղված գրությանը:

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից՝ 2004թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան հետազոտող Սինսիա Բաքլիին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/*

### **Որոշեցին՝**

Թույլատրել տրամադրել, «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից՝ 2004թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան հետազոտող Սինսիա Բաքլիին զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմանով:

*/Անհատական/*

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում Ուկրաինայի Կիև քաղաքում 03.07–06.07.2007թ. «Ազատ Առևտրի Եվրոպական Կազմակերպության» (EFTA), ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի և Ուկրաինայի վիճակագրության պետական կոմիտեի հրավերով «Պետական վիճակագրության հիմնախնդիրները տնտեսական գլոբալիզացիայի պայմաններում» խորագրով համաժողովին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան /*

3.2. Հաղորդում Պորտուգալիայի Լիսաբոն քաղաքում 05.07.2007 թ. Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպված «Տվյալների հավաքագրումը՝ որպես կանանց հանդեպ, այդ թվում նաև՝ ընտանիքում կատարվող բռնությունների դեմ արդյունավետ քաղաքականության մշակման նախապայման» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա. Մաֆյան/*

3.3. Հաղորդում Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում 11.06-15.06. 2007թ. «Հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն» նախագծի շրջանակում աշխատանքային հանդիպման վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Ն.Բաղդասարյան, Լ.Քալանթարյան, Ա.Գյուլբենկյան,  
Ա.Կարապետյան/*

***Որոշեցին՝***

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

**4. Տեղեկատվություն Natalia Ivanik-ի և Thomas Elkjaer-ի կողմից պատրաստված՝ «Balance of Payments Statistics Mission (August 22 - September 5, 2006)» հաշվետվության մեջ նշված երաշխավորությունների իրագործման ուղղությամբ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ իրականացված աշխատանքների (միջոցառումների) վերաբերյալ:**

***Որոշեցին՝***

Natalia Ivanik-ի և Thomas Elkjaer-ի կողմից պատրաստված՝ «Balance of Payments Statistics Mission (August 22 - September 5, 2006)» հաշվետվության մեջ նշված երաշխավորությունների իրագործման ուղղությամբ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ կենտրոնական բանկի համատեղ իրականացրած աշխատանքների (միջոցառումների) վերաբերյալ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

***01.08. 2007թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Վ. Դավթյանը, Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը:

*Նյութում լավեցին հետևյալ հարցերը.*

1. «ՀՀ Գյուղատնտեսության նախարարության 19.07.2007թ. թիվ 07-ԴԼ-03-1797 գրությամբ ՀՀ ԱՎԾ-ին ներկայացված.

- ձև թիվ 3-գտ «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ»,
- ձև թիվ 4-գտ (տարեկան) «ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԻ ՏԱԿ ԿԱՏԱՐՎԱԾ ՑԱՆՔԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ»,
- ձև թիվ 4-գտ (տարեկան) (հավելված) «ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԻ ՏԱԿ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՑԱՆՔԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ»,
- ձև թիվ 29-գտ (ամսական) «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ, ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ, ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԵՎ ՑՐՏԱՀԵՐԿԻ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ»,
- ձև թիվ 29-գտ (տարեկան) «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԵՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՔՎԱԾ ԲԵՐՔԻ ՄԱՍԻՆ 200\_\_Թ»,
- ձև թիվ 29-գտ (տարեկան) (հավելված) «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԵՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՔՎԱԾ ԲԵՐՔԻ ՄԱՍԻՆ 200\_\_Թ»,
- ձև թիվ 6-գտ (տարեկան) «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»,

վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին և լրացման հրահանգներին հավանություն տալու վերաբերյալ» հարցը:

*/Չեկուցող՝ Ա.Ավագյան/*

**Որոշեցին՝**

Հավանություն տալ

«ՀՀ Գյուղատնտեսության նախարարության 19.07.2007թ. թիվ 07-ԴԼ-03-1797 գրությամբ ՀՀ ԱՎԾ-ին ներկայացված.

- ձև թիվ 3-գտ «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ»,
- ձև թիվ 4-գտ (տարեկան) «ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԻ ՏԱԿ ԿԱՏԱՐՎԱԾ ՑԱՆՔԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ»,

- ձև թիվ 4-գտ (տարեկան) (հավելված) «ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԻ ՏԱԿ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՑԱՆՔԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ»,
- ձև թիվ 29-գտ (ամսական) «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ, ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ, ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԵՎ ՑՐՏԱՀԵՐԿԻ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ»,
- ձև թիվ 29-գտ (տարեկան) «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԵՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՔՎԱԾ ԲԵՐՔԻ ՄԱՍԻՆ 200\_\_Թ»,
- ձև թիվ 29-գտ (տարեկան) (հավելված) «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԵՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՔՎԱԾ ԲԵՐՔԻ ՄԱՍԻՆ 200\_\_Թ»,
- ձև թիվ 6-գտ (տարեկան) «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»,

վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին և լրացման հրահանգներին:

*/Անհատական/*

**2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002թ. հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» հարցը:**

*/Ձեկուցող՝ Ա. Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 110-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. Որոշմամբ հաստատված հավելված 2-ի 18-րդ կետի «վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժինը» բաժանման ձևով վերակազմակերպել վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի և հասարակայնության հետ կապերի բաժնի.

ա) որոշմամբ հաստատված հավելված 2-ի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժին»

բ) որոշմամբ հաստատված հավելված 2-ը լրացնել նոր՝ 28-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«28. Հասարակայնության հետ կապերի բաժին»:

*/Նորմատիվ/*